

- 2018թ. հունիսի 27-ին տեղի ունեցավ «Արցախի ՀԷԿ» ԲԲԸ բաժնետերերի ընդհանուր ժողովը: Ընդունվեցին հետևյալ որոշումները.

-Հաստատել «Արցախի ՀԷԿ» ԲԲԸ 2017 թվականի ֆինանսատնտեսական գործունեության տարեկան հաշվետվությունները և հաշվապահական հաշվեկշիռները:

-Հաստատել «Ասատրյան» ՍՊԸ-ին, որպես 2018 թվականի ֆինանսատնտեսական գործունեության աուդիտ իրականացնող անձ:

- Հաստատել զուտ շահույթի բաշխման համամասնությունները, այդ թվում՝
 1. շահութաբաժինների մեկ բաժնետոմսի անվանական արժեքի նկատմամբ 10 % տարեկան եկամտաբերության հաշվարկով՝ ընդամենը 1.065.000.000 (մեկ միլիարդ վաթսունհինգ միլիոն) ՀՀ դրամ:
 2. մասհանումներ պահուստային հիմնադրամին՝ զուտ շահույթի 5%-ի չափով՝ 80.339.000 (ութսուն միլիոն երեք հարյուր երեսունհինգ հազար) ՀՀ դրամ:
 3. չբաշխված շահույթ՝ 461.422.000 (չորս հարյուր վաթսունմեկ միլիոն չորս հարյուր քսաներկու հազար) ՀՀ դրամ:

2017 թվականի արդյունքներով ընկերության բաժնետերերին վճարել շահութաբաժիններ՝ 1 բաժնետոմսին 100 (մեկ հարյուր) ՀՀ դրամ հաշվարկով՝ վճարումը սկսելով 2018թ. հուլիսի 02-ից:

-«Արցախի ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության Տնօրենների Խորհուրդը ընտրել հետևյալ կազմով՝

1. Հարությունյան Արայիկ
2. Բայրոզյան Բաֆֆի
3. Արաբյան Կարեն
4. Բոյաջյան Հայկ
5. Դոնյան Արա
6. Շեկոյան Վլադիմիր
7. Մկրտչյան Մենուա